# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, հեռ.060 517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**03 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 21-Ա**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 03-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը՝ ինչպես նաև հաշվի առնելով այն, որ օրակարգում առկա 2-րդ հարցի քննարկման համար չեն ներկայացվել բավարար փաստաթղթեր, իսկ 5-րդ հարցի 2-րդ մասը դուրս է ավագանու լիազորություններից.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 03-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ սուբվենցիաններ ստանալու նպատակով Վերին Պտղնի համայնքում <<Մանկապարտեզի շենքի կառուցման>> ծրագիրը հաստատելու մասին:

2. <<Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի եղանակով ընդլայնման նպատակով օտարելու մասին>> հարցը հանել օրակարգից:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և նրա վրա գտնվող ավտոտնակն ուղղակի վաճառքի եղանակով՝ գնման նախապատվության իրավունք ունեցող անձին օտարելու մասին:

4. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

5. <<Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու և դրանց վրա ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին>> հարցը հաստատել <<Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու>> մասով:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

3.ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**03 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 22-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ>> ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և դրանով պայմանավորված համայնքի բնակչության նախակրթական մակարդակի որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու նպատակով Վերին Պտղնի համայնքում <<Մանկապարտեզի շենքի կառուցման>> ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

3.ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

*Հավելված*
*Վերին Պտղնի համայնքի ավագանու*
*2019 թվականի մայիսի 03-ի N 22-Ա որոշման*

ՀԱՅՏ
Վերին Պտղնի համայնքի 2019 թվականի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *Մանկապարտեզի շենքի կառուցում:* |
| Մարզ | *Կոտայք* |
| Համայնքը /համայնքները | *Վերին Պտղնի* |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | *13 կմ, 35 կմ* |
| ,Համայնքի /բնակավայրի բնակչությունը | *972 մարդ* |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի | |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն | *Ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից,*<br><br>*Էլեկտրամատակարարումն՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից,*<br><br>*Գազամատակարարումն՝ «Աբովյանի ԳԳՄ»-ի կողմից,*<br><br>*Համայնքի փողոցային լուսավորությունն ապահովված է շուրջ 90 %-ով, որն իրականացվում է համայնքապետարանի կողմից, նախկինում գոյություն ունեցող էլլամպերի 95 %-ը փոխարինված է էներգախնայող Լեդ տեսակի լուսատուներով,*<br><br>*Ներհամայնքային փողոցները մեծամասամբ ասֆալտապատ են, ներկայումս նախատեսված է ևս 4 փողոցների ասֆալտապատում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներն իրականացված են:*<br><br>*Ոռոգման և ջրահեռացման ցանց համայնքում առկա չէ:* |
| Ծրագրի ընդհանուր | *Համայնքում մանկապարտեզի շենքի կառուցումը համարվում է բնակչության կարևորագույն* |

| | |
|---|---|
| **նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *խնդիրներից մեկը: Համայնքի դպրոցին կից 2015 թվականից գործում է նաև նախադպրոցական, որը նախատեսված է միայն 4-5 տարեկան երեխաների համար:Ներկայումս հաճախում են 18 երեխա: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում 1-5 տարեկան երեխաների թիվը կազմում է 69: Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա նախատեսվում է նորակառույց մանկապարտեզում ստեղծել երկու խումբ՝ այդ թվում նաև մսուր, որի պայմաններում թե աճող սերունդը, թե համայնքի երեխաների այն 80% -ը ևս , ովքեր հաճախում են մանկապարտեզ հարևան համայնքներ՝ք. Աբովյան , ք. Երևան՝ ինչը շատ ծախսատար է , ունենում են նաև ժամանակի մեծ կորուստ, հնարավորություն կունենան կրթվել և դաստիարակվել սեփական համայնքում:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Մանկապարտեզի շենքի կառուցումը համայնքի հիմնախնդիրներից է. ծրագրի իրականացման արդյունքում կլուծվեն այնպիսի սոցիալ-կենցաղային հիմնախնդիրներից , ինչպիսիք են բնակչության ժամանակի և նյութական միջոցների խնայողությամբ մատաղ սերնդին՝ նախադպրոցական տարիքի երեխաներին պատշաճ կրթելն ու դաստիարակելը, նրանց մշակութային կյանքի զարգացման նպաստելը: Նորակառույց երկհարկանի՝ քաղաքաշինական բոլոր նորմերին համապատասխան շենքը և դրա բակը կկահավորվեն անհրաժեշտ գույքով, որ կայցելեն երեխաներ նաև հարևան համայնքներից;*<br><br>*Բնակչության աճին զուգընթաց աճելու է նաև մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը / միջնաժամկետ կտրվածքով սաների թիվը կդառնա 43, իսկ երկարաժամկետ՝ 60 /:*<br><br>*Մանկապարտեզ կայցելեն մինչև 60 երեխա:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | *Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է*<br>*Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում՝ կազմում*<br>*Գնումների գործընթացի կազմակերպում*<br>*Կապալառուի հետ պայմանագրի կնքում*<br>*Շինարարական աշխատանքների իրականացում*<br>*Ներքին գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման և կապի համակարգերի, ներքին կոմունալ հարդարման աշխատանքների կատարում*<br>*Ընդունում-հանձնում* |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում** | *Ծրագրի իրականացումը կատարված ծախսերի չափով ազդեցություն կունենա հիմնական արժեքների վրա:Ծրագրի իրականացման դեպքում համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցի արժեքը կավելանա նախահաշվային արժեքի չափով:Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *Ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ թէ Վերին Պտղնի համայնքի բնակչությունը, թէ հարևան համայնքներից որոշակի զանգված:*<br><br>*Եթե մինչ ծրագրի իրականացումը երեխաների ¾-ը կամ չէր այցելում մանկապարտեզ կամ համայնքից դուրս էին այցելում , ապա ծրագրի իրագործման պայմաններում երեխաները կայցելեն իրենց համայնքում գործող մանկապարտեզ՝ ծնողների ժամանակի և նյութական միջոցների խնայողությամբ:* |
| **Ծրագրի** | *Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է ստեղծել ժամանակավոր 15* |

**իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր**

*աշխատատեղեր:*

*Հիմնական աշխատատեղ՝ տնօրեն, հաշվապահ, խոհարար, տնտեսվար, 2 դաստիարակ, 2 դայակ, պահակ, հավաքարար:*

**Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը**

*Նախորդ տարվա բյուջեն՝ 55786.0 ՀՀ դրամ .*

*Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|
| **Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները** այդ թվում՝ | | | |
| -Վարչական բյուջեի եկամուտներ, որից | 44090.0 | 48158 | 109.2 |
| - Սեփական եկամուտներ | 38232.6 | 42300.6 | 110.6 |
| -Ֆոնդային բյուջեի եկամուտներ | - | 71394.7 | |
| **Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր,** որից | | | |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 44090.0 | 38602.0 | 87.5 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 11696.0 | 10011.3 | 85.6 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,** որից | | | |
| - ճանապարհաշինություն | 8196.5 | 7371.9 | 89.9 |
| - ջրամատակարարում | | | |
| - փողոցային լուսավորություն | 1000.0 | 982.8 | 98.3 |
| - գյուղատնտեսություն | | | |
| -կրթանպատակային սարքավորում | 800.0 | 453.2 | 56.6 |
| -վարչական սարքավորում | 1700.0 | 1203.4 | 70.8 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

*125146.0ՀՀ դրամ .*

*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | Պլան |
|---|---|
| **Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում** այդ թվում՝ | 125146.0 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից | 42510.0 |
| - սեփական եկամուտներ | 36652.6 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | |
| **Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր,** որից | 125146.0 |

| | | |
|---|---|---|
| | *որից* | |
| | - Փողոցային լուսավորություն | *1000.0* |
| | - Նախադպրոցական շենքի կառուցում | *60556.0* |
| | - ասֆալտապատում | *15580.0* |
| | -գետանցումի վերանորոգում | *2000.0* |
| | -տրանսպորտային և վարչական սարքավորումներ | *3500.0* |
| | աղբահանություն | *720.0* |

| | |
|---|---|
| Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով) | ***Դոտացիա 5857.4դրամ***<br><br>*Համայնքի 2019թ. բյուջեի մուտքերը նաև դոտացիայի գծով 125146.0 դրամ է, ֆոնդային մասով նախատեսված ծախս 9556.0դրամ և տարեսկզբի մնացորդ 73080.0, ընդամենը 82636.0 դրամ, որից 1000.0 փողոցային լուսավորության, 60556.0 դրամ նախադպրոցական շենքի կառուցման, 15580.0ասֆալտապատման, 2000.0 գետանցումի նորոգման, 3500.0 տրանսպորտային և վարչական սարքավորումների, 720.0 աղբահանության համար* |
| Ծրագրի ընդհանուր բյուջեն | *76000000 ՀՀդրամ (100%)* |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *38000000ՀՀ դրամ (50%)* |
| Այլ ներդրողներ | *Այլ ներդրողներ չկան :* |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Սկիզբը հուլիս – օգոստոս 2019թ. Տևողությունը՝ 4 ամիս՝* |
| Ծրագրի ծախսերը | *Կից ներկայացվում են ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը գտնվում է ընթացքի մեջ:* |
| Ամսաթիվ | *"02"05. 2019թ.* |

Համայնքի տնտեսական պատասխանատու Յուրի Գևորգյան

Հեռախոսահամարը 060517670

էլեկտրոնային փոստը verinptghni@mail.ru

Վերին Պտղնի համայնքի ղեկավար Գևորգ Պողոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**03 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 23-Ա**

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՝ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի դ) ենթակետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող 07-062-0001-0214 կադաստրային ծածկագրով 0.00325 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և դրա վրա առկա 07-062-0001-0214-001 կադաստրային ծածկագրով 24.55 քմ ավտոտնակը՝ սեփականության վկայական 11032019-07-0060:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քմ -ի համար՝ 2600 ( երկու հազար վեց հարյուր ) ՀՀ դրամ (տարածագնահատման 7-րդ գոտու՝ կիրառված գործակիցը 0.26)

2) հողամասի 1 քմ-ի կադաստրային արժեքը՝ 4524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ :

3. Առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի եղանակով գնելու վերը նշված գույքը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

3.ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060 517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**03 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 24-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29,30,31-րդ կետերի պահանջներով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները՝

**Համայնքի ավագանին որոշում է.**

1. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացու սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0204-0005/ 0.084 հա գյուղատնտեսական նշանակության /վարելահող/ հողամասից 0.0314 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության՝ <<հասարակական կառուցապատման գործառնական նշանակության>> և 0.0526 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության՝ <<բնակելի կառուցապատման գործառնական նշանակության>> նպատակով՝ համաձայն գործող հատակագծի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060 517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**03 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 25-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29,30,31-րդ կետերի պահանջներով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով,հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները՝

**Համայնքի ավագանին որոշում է.**

1. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացու սեփականություն հանդիսացող / կադաստրային ծածկագիր 07-062-0041-0006/ 3.46686 հա ընդհանուրը, որից 2.96176 հա վարելահող, 0.5051 հա այլ հողատեսք գյուղատնտեսական նշանակության հողամասից 247.5 քմ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության՝ <<հասարակական կառուցապատման գործառնական նշանակության>>:

2. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացու սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0041-0007/ 0.03812 հա գյուղատնտեսական նշանակության /վարելահող/ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության՝ <<հասարակական կառուցապատման գործառնական նշանակության>>:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ**